ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0077, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 26

«04» 04 2014 թ.

< 2 - 495

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ
ՊԱՐՈՆ Վ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գաբրիելյան,

Ի պատասխան Ձեր 2014 թվականի մարտի 21-ի թիվ 02/12.15/4034-14 գրության՝ ուղարկում ենք «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ճապոնիայի կառավարության միջև հայտագրերի փոխանակման ձևով կնքվող» դրամաշնորհի համաձայնագրի կնքման առաջարկությանը համաձայնություն տալու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության Նախագահի աշխատակազմի իրավաբանական վարչության եզրակացությունը:

Առդիր՝ 1 էջ:

Հարգանքով՝

Վ. ՍԱՐԳՍՅԱՆ

«ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
ՄՈՒՏՔԻ ԲԱԺՆ
Մուտք թիվ 010-9467
«07» 04 2014թ.

Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

«ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՃԱՊՈՆԻԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՀԱՅՏԱԳՐԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ՁԵՎՈՎ ԿՆՔՎՈՂ» ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«ՀՀ կառավարության և Ճապոնիայի կառավարության միջև հայտագրերի փոխանակման ձևով կնքվող» դրամաշնորհի համաձայնագրի նախագծի «Հայկական կողմի հայտագիրը» բաժնի նախավերջին պարբերությամբ սահմանվում է, որ Ճապոնիայի կառավարության հայտագիրը և ՀՀ կառավարության պատասխան հայտագիրն ամրագրվում են որպես երկու կառավարությունների միջև համաձայնագիր, որն ուժի մեջ է մտնում ՀՀ կառավարության պատասխան հայտագրի ամսաթվով:

Սակայն ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 4-րդ պարբերությամբ և «ՀՀ միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասով՝ միջազգային պայմանագրերը ՀՀ-ի համար ուժի մեջ են մտնում միայն ներպետական ընթացակարգերով այն վավերացվելուց կամ հաստատվելուց հետո:

Ելնելով վերոգրյալից առաջարկում ենք նախագծի վերոնշյալ պարբերությունը համապատասխանեցնել ՀՀ Սահմանադրությանը և «ՀՀ միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենքին:

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ Ա. ԹՈՒՆՅԱՆ

Կատարող՝ Լիլիթ Վիրաբյան